6600.0401.30.10.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

30 հոկտեմբերի 2019 թվականի № 401Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի №750Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 28-րդ, 33-րդ, 34-րդ հոդվածները և հաշվի առնելով «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի հոկտեմբերի 2-ի №0163_19, հոկտեմբերի 14-ի №0181_2019, հոկտեմբերի 23-ի №0188_2019, «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի հոկտեմբերի 16-ի №01-35/4587, հոկտեմբերի 21-ի №01-35/4700 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի «Պայմանագրային և տնօրինելի հզորությունները հաստատելու մասին» №750Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ և 6-րդ աղյուսակները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն №1 և №2 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» և «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություններին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, իսկ որոշման գործողությունը տարածվում է 2019 թվականի հոկտեմբերի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂԴԱՍՅԱՆ

ք. Երևան
30 հոկտեմբերի 2019թ.